Հաստատում եմ՝
Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի
ռեկտոր, պրոֆեսոր Ս.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«07» Նոյեմբերի, 2022թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Նաիրա Յուրայի Վահանյանի՝ «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների ինտոնավորումը ուսուցման գործընթացում» վերնագրով ԺԳ 00 .02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Երաժշտություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Հայ դաշնամուրային արվեստի կատարողական և մեթոդաբանական խնդիրներին նվիրված գրականությունը համալրվեց ևս մեկ արժեքավոր ուսումնասիրությամբ: Այս անգամ քննության նյութ է ծառայել երաժշտաարտահայտչական միջոցներից ամենաբարդ և բազմաշերտ մի հասկացություն, ինչպիսին է ինտոնացիան, ինտոնավորումը: Երաժշտական ինտոնացիայի խնդիրը գրավել է ուսումնասիրողների ուշադրությունը սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Հայտնի են Բ. Ասաֆևի, Ա. Լոսևի, Պ. Ֆլորենսկու և շատ ուրիշների հիմնորոշ ուսումնասիրություններն այս ասպարեզում, որոնցում ինտոնացիան, ի թիվս այլ կարևորագույն երաժշտական արտահայտչամիջոցների, դիտարկվում է որպես երաժշտական կերպարի ձևակառուցողական պրոցեսի և ուրույն լեզվամտածողության կերտման կարևորագույն բաղադրիչ: Եվ եթե համաշխարհային երաժշտության գլուխգործոցներին նվիրված ուսումնասիրություններում խնդրո առարկան բավականաչափ խորը և բազմակողմանի ուսումնասիրված է և որոշակի իմաստով համակարգված, ապա հայ երաժշտությանը նվիրված աշխատություններում ինտոնացիայի խնդիրը չի դիտարկվել առանձին

վերցված, թեև հայ դաշնամուրային կատարողականության ասպարեզում իրենց անուրանալի վաստակն ունեցող երախտավորները մշտապես ընդգծել են ինտոնացիան, որպես երաժշտական կերպարի կերտման, ստեղծագործության դրամատուրգիայի զարգացման կարևորագույն միջոց:

Ուսումնասիրության հեղինակը քաջատեղյակ է խնդրի պատմական ակունքներին, սկզբնաղբյուրներին, հայ երաժշտության պատմատեսական մտքի երախտավորների կարևորագույն աշխատություններին, և իր թեզի առաջին գլուխն ամբողջությամբ կառուցել է գրականության համապարփակ դիտարկման վրա՝ առանձնահատուկ կարևորելով այն հետազոտողներին, որոնք անդրադարձել են հայ երաժշտության մեջ ինտոնացիայի հիմնախնդրին:

Դիսերտանտը թեմայի առնչությամբ ծավալուն մատենագիտական նյութ է ուսումնասիրել և համակարգել, այդ են վկայում աշխատանքի վերջում ներկայացված հսկայական մատենագիտական ցանկը, ինչպես նաև պատշաճ բծախնդրությամբ և գիտական ապարատի պահանջներին համապատասխանող ծանոթագրություններն ու հղումները: Այս, ինչպես նաև աշխատանքի թեմայի ընտրության, գիտական ուղղվածության խնդրում անհնար է չնշել ասպիրանտի գիտական ղեկավարի՝ մանկավարժական գիտությունների դոկտոր Յուրի Վաղարշակի Յուզբաշյանի դերակատարումը:

Ներկայացվող աշխատության գիտական նորույթն այն է, որ խնդրո առարկա է հանդիսանում երաժշտական լեզվի կարևորագույն բաղադրիչներից մեկը, որն ազգային մտածողության դրսևորման կարևորագույն գործոններից է: Բացի այդ, երաժշտական ինտոնացիան քննվում է ոչ թե վերացական տեսական մտահանգումներով, այլ հիմնվում է կատարողական փորձի, ավելին՝ կատարողական մեթոդաբանության ասպարեզում կուտակված սեփական փորձի վրա: Իր առջև նպատակ դնելով ուսումնասիրել հայ կոմպոզիտորների՝ դաշնամուրի համար գրված փոքրածավալ և մեծածավալ գործերը տեսական, մեթոդական և գործնական տեսանկյուններից, դիսերտանտը նախ և առաջ դուրս է բերում և համակարգում ազգային ինտոնավորման առավել տիպական

մոդելները: Ատենախոսն առաջարկում է իր երկարամյա մանկավարժական փորձի ընթացքում ձևավորված և հաջողությամբ կիրառվող մեթոդաբանական լուծումները: Այս հարցում լիարժեք դրսևորվում են դիսերտանտի՝ Նաիրա Վահանյանի, ոչ միայն կատարող-դաշնակահարի հմտությունները, այլև փորձառու մանկավարժի գործնական կարողությունները: Այս հանգամանքը նույնպես կցանկանայինք ընդգծել ատենախոսության դրական կողմերի շարքում: Դիտարկվող ստեղծագործություններից ոչ մեկի ընտրությունն ինքնանպատակ չէ, այլ մասնագիտական դաշնամուրի դասավանդման մեթոդաբանության կարևոր մանրամասներ է բացահայտում, որոնք կոչված են առավելագույնս ընդգծելու ստեղծագործությունների ազգային ինտոնավորման առանձնահատկությունները:

Աշխատանքն ընդհանուր առմամբ իրականացվել է մեծ բծախնդրությամբ և գիտական պարկեշտության չափանիշներին համապատասխան: Վստահ եմ, այն իր արժանի տեղը կգբաղեցնի հայ դաշնամուրային արվեստի կատարողականության հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրությունների կողքին և կարևոր գործնական մեթոդական օգնություն կարող է ծառայել թե՛ մանկավարժներին և թե՛ պատանի կատարողներին ազգային երկացանկի մեկնաբանման հարցում: Այն լիովին համապատասխանում է երաժշտական մանկավարժության ասպարեզում թեկնածուական ատենախոսության պահանջներին:

Աշխատանքի վերաբերյալ ունենք մի քանի դիտարկումներ, որոնք, կարծում ենք հետագայում հրատարակելու պարագայում հաշվի կառնվեն:

1. Աշխատանքում բացակայում է հայալեզու մասնագիտական գրականությունը: Մասնավորապես, 1) Նովալիս Դերոյանի «Երաժշտական ստեղծագործության վերլուծություն»-ը (Ե., «Հայաստան» հրտ., 2020), որն առ այսօր միակ և անփոխարինելի հայերեն դասագիրքն է հայ երաժշտագիտության մեջ, և որում առաջին անգամ առաջարկվում են հայկական ժողովրդական մեղեդիների, այդ թվում նաև ազգային ինտոնացիայի վերլուծության ուրույն մեթոդաբանություն, 2) նույն հեղինակի «Երաժշտական ստեղծագործության ամբողջականության հարցի շուրջ»

ուսունասիրությունը և ինտոնացիայի խնդրին առնչվող մի շարք հոդվածներ, որոնք զետեղված են «Երկեր» ժողովածուում (Եր., 2015), 3) Իրինա Զոլոտովայի «Դաշնամուրային արվեստի պատմություն» դասագիրքը (Եր., 2017), որտեղ համաշխարհային դաշնամուրային արվեստի համատեքստում դիտարկվում է նաև հայկական դաշնամուրային արվեստն՝ իր առանձնահատկություններով, այդ թվում՝ նաև ինտոնացիոն:

2. Նոտային հավելվածը շատ մանր է տպված և այդ պատճառով գրեթե անընթեռնելի է: Մենագրության պարագայում, թերևս, նոտային օրինակները հարկավոր է համակարգչային ընթեռնելի շարվածքով ներկայացնել:

Աշխատանքն, այդուհանդերձ, ունի գիտամեթոդական և գործնական արժեք, այն կարևոր ներդրում է դաշնամուրային կատարողականության դասավանդման ասպարեզում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նաիրա Յուրայի Վահանյանի՝ «Հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների ինտոնավորումը ուսուցման գործընթացում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իրականացված է ակադեմիական ազնվության պահանջներին համապատասխան, իսկ ատենախոսը բոլոր հիմքերն ունի հայցելու ԺԳ 00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Երաժշտություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, ինչի համար էլ, որպես առաջատար կազմակերպություն, միջնորդում ենք Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի 020 մասնագիտական խորհրդի մեծարգո անդամներին:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է 2022 թ. հոկտեմբերի 31-ին ԵՊԿ Երաժշտության տեսության ամբիոնի թիվ 4 նիստում: Նիստին ներկա էին՝ արվ. դոկտոր,

պրոֆ. Կ.Ջաղացպանյանը, արվ. թեկնածու, պրոֆ. Մ.Կոկժանը, պրոֆ. Ս.Բոյաջյանը, արվ. թեկնածու, դոցենտ Ռ.Ստեփանյանը, արվ. թեկնածու, դոցենտ Ծ.Մովսիսյանը, դասախոսներ Ի.Խաչատրյանը, Ն.Բաղդասարյանը, Ս.Ղափլանյանը:

ԵՊԿ Երաժշտության տեսության ամբիոնի վարիչ,
Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ռ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՊԿ Երաժշտության տեսության ամբիոնի վարիչ, արվ. թեկնածու Ռ.Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊԿ գիտքարտուղար՝ Ծ.ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ

07.11.2022թ.